

1. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԵՆԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Անցյալ տարի աշնանը հաղադրության համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։ Այդ նշանավոր հորեղանի լայնորեն և մեծ շուքով կատարվեց Սովետական Միությանում։ Հանձարեղ երգչի տարեկիցին նվիրված բազմաթիվ միջոցառումներ անցկացվեցին նաև արտասահմանյան մի շարք երկրներում և սփյուռքահայ գաղութներում։

Սփյուռքի հայկական մամուլի աշնանային ամիսների համարները լի էին Սայաթ-Նովային նվիրված նյութերով։ Գրում էին սովետահայ բանասերներն ու դրողները, սփյուռքի հայ մշակույթի անվանի գործիչները, շատերն իրենց բանաստեղծական խոսքն էին նվեր բերում անմահ երգչին՝ որպես հիշատակ։ Փարիզի «Աշխարհ», Սոֆիայի «Ներսիս», Բեյրութի «Մեր նշանաբանն է՝ հառաջ», «Զարթոնք», Իստանբուլի «Ալեքսի» և շատ այլ թերթեր ու հանդեսներ առանձին համարներ նվիրեցին Սայաթ-Նովային։ Սփյուռքահայ մամուլի ուշադրության կենտրոնում էին այդ օրերին մայր-հայրենիքում, ապա Մոսկվայում, Թրիփլիսիում, Բաքվում տեղի ունեցող հանդեսները, որոնց մասին տպագրվեցին մանրամասն տեղեկություններ։

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը լայնորեն նշեցին Բուլղարիայի հայ աշխատավորները։ Եկեա օգոստոս ամսին էսպերանտիստների համաշխարհային 48-րդ համագումարիս մասնակցելու համար Սոֆիա ժամանած պրոֆ. Բուրգեն Սեակր տեղի «Ներսիս» մշակութային կենտրոնի ակումբում հետաքրքիր զեկուցում կարդաց Սայաթ-Նովայի կյանքի ու գործի մասին։ Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Բուլղարիայի բոլոր հայաբնակ վայրերում անցկացվեցին հորեղանական միջոցառումներ։ Շատ բաղադրներում՝ Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում, Կոլարովպրադում հանդեսներ կազմակերպվեցին խաղաղության պաշտպանության տեղական կոմիտեների, բուլղարասովետական բարեկամության միության և «Ներսիս» մշակութային միության միացյալ ջանքերով։ Այդ հանդեսների ժամանակ, հայ գործիչներից բացի, զեկուցումներ կարդացին բուլ-

ղարական մշակույթի ներկայացուցիչներ՝ բանաստեղծ Լամարր, Վեսա Սավովան, Դ. Խրիստով, Թ. Նևսովը և ուրիշներ։ Համերգներին մասնակցեցին հայկական, բուլղարական, հունական անսամբլներ։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրող հայությունը ևս լայնորեն նշեց մեծ երգչի հորեղանի։ Ֆիլադելֆիա քաղաքում գործող հայկական «Քնար» երգչախմբի նախաձեռնությամբ կազմակերպվեց երեկո, որի ժամանակ երգչախումբը Արսեն Սայանի ղեկավարությամբ կատարեց Սայաթ-Նովայի երգերը, ներկաներն ունկնդրեցին հայերեն ու անգլերեն դասախոսություններ և արտասանություններ։ Ուշագրավ էր երեկոյի տպագրված հայտագիրը. նրա մեջ հայերեն և անգլերեն լեզուներով զետեղված էին երգչի կենսագրությունը, նրա երեք երգերը և Հ. Թումանյանի, Ն. Զարենցի ու Հ. Շիրազի ձեռները՝ նվիրված Սայաթ-Նովային։ Լոս-Անջելոսում մի խումբ թատերասերներ Սեդրակ Վարդանյանի ղեկավարությամբ ներկայացրին «Սայաթ-Նովա» օպերետը, որի հաջողությանը մեծապես նպաստել էր աշուղ Աշոտ Առուստամյանի մասնակցությունը։ ԱՄՆ-ի էմբեսսի քաղաքի հայկական ծերանոցի նորակառույց գրադարանի բացումը համընկավ Սայաթ-Նովայի հորեղանական օրերին։ Այստեղ կազմակերպվեց հատուկ ցուցահանդես, տեղի ունեցավ երեկո, կատարվեցին Սայաթ-Նովայի երգերը։

Հորեղանի հայկական մի շարք պոդթավայրերում նշվեց յուրահատուկ ձևով։ Ֆրանսիայում և Սիրիայում լույս տեսան 1964 թ. օրացույցներ՝ Սայաթ-Նովայի դիմանկարներով։ Հայ լիպի Զավեն Բրյուճյանը արժաթագծե պողպատից պատրաստեց Սայաթ-Նովայի դիմանկարով փոքրիկ կրծքանշանը։ Լոնդոնի «Հայ տան» մշակութային հանձնախումբը սահմանեց Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հայերեն կամ անգլերեն լավագույն հոդվածի հատուկ մրցանակ։ Լիրանանում բնակվող իրանահայ ճանաչված մանրանկարիչ Արրահամ Գուրդենյանը պատրաստեց Սայաթ-Նովայի կյանքին նվիրված գունազեղ նկարների մի ամբողջ շարք, քսանի հասնող այդ նկարա-

շարքը գեղազարդված է հայկական հին մանրանկարների ոճով:

Ֆրանսահայ երիտասարդական միությունը (ԺԱՖ), որը վերջին շրջանում ամեն տարի անց է կացնում մշակութային տոնահանդես, որոշեց 1963 թ. հանդեսները նվիրել Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին: ԺԱՖ-ի 5-րդ տոնահանդեսին, որը տեղի ունեցավ նոյեմբերի սկզբներին և տևեց երեք օր, պատվավոր նախագահ էր հայտարարվել հռչակավոր կոմպոզիտոր Արամ խաչատրյանը: Ներկա էին Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Շահինյանը, սովետահայ կոմպոզիտորներ Աոնո Բարաջանյանը և խաչատուր Ավետիսյանը, Ֆրանսիայի տարբեր վայրերից եկած հայ երիտասարդական ներկայացուցիչներ: Երգերի, պարերի և արտասանության լավագույն կատարողների համար սահմանվել էին հատուկ մրցանակներ և «Սայաթ-Նովա» մրցամեդալը: Հորելյանական հանդեսներին մասնակցում էին «Արմենիա» նվագախումբը, «Գայանե» պարախումբը, ֆրանսահայերին լավ ծանոթ ասմունքող Սարգիս Պողոսյանը՝ Մարսելից, դաշնակահար Սիրանոսյանը՝ Ժնևից և շատ այլ շնորհալի երիտասարդներ:

Հիրանանի հայկական դպրոցներում կազմակերպվեցին երեկոներ ու ցուցահանդեսներ, աշակերտությունը առիթ ունեցավ բազմիցս ունկնդրելու Սայաթ-Նովայի երգերի ձայնագրությունները: Բեյրութում հրատարակվող «Մեր նշանաբանն է՝ հառաջ» թերթի գրական հավելվածը՝ «Հառաջ գրականը» ծրագրեց մի քանի հազար օրինակ տպաքանակով լույս բնծայել Սայաթ-Նովայի երգերի արարներն թարգմանությունների ժողովածուն: Ըր հոկտեմբեր-նոյեմբերի համարում «Հառաջ գրականը» արդեն նմուշներ էր տպագրել ապագա այդ ժողովածուից՝ բանաստեղծությունների հայերեն բնագրերի հետ: Գրքի առաջարանը համաձայնել և գրել նշանավոր արար բանաստեղծ Սաիդ Աբրը:

Նմանօրինակ միջոցառումներ անցկացվեցին նաև Պոլսի հայ գաղութում: Այստեղի մշակութային թատերասիրաց միության կազմակերպած գեղարվեստական երեկույթին հրավիրվել էր բեյրութահայ հանրածանոթ քյամանչիստ Ռուբենը: Համերգին մասնակցում էին բազմաթիվ շնորհալի ուժեր, այդ թվում և «Մամիկոնյան» երգչախումբը:

Սայաթ-Նովայի հորելյանը նշվեց նաև Չեխոսլովակիայում: Խաղաղության պաշտպանության շեխոսլովակյան կոմիտեն, Արևելագիտության ինստիտուտը, Գիտությունների ակադեմիան Պրագայի Նապրստեք թանգարանի սրահում կազմակերպեցին բանախոսության երեկո՝ նվիրված Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը: Երեկոյին հիմնական զեկուցմամբ հանդես եկավ հանրածանոթ երիտասարդ չեխ հայագետ Լյուդմիլա Մոտալովան: Ներկաներն ունկնդրեցին Սայաթ-Նովայի երգերի ձայնագրությունները: Այդ օրերին Պրագայի ռադիոն հատուկ հաղորդում նվիրեց Սայաթ-Նովային: Նապրստեք թանգարանի մուտքի մոտ ցուցադրվեցին Սայաթ-Նովայի ձեռագրերի լուսանկարները և նրա մեծագիր դիմանկարը:

Ռումինիայի հասարակայնության համար Սայաթ-Նովայի հորելյանը առիթ հանդիսացավ մոտիկից ծանոթանալու մեծ երգչի կյանքին ու ստեղծագործությանը: Բուխարեստի Պատմության թանգարանի դասախոսությունների սրահում կազմակերպվեց հանդիսավոր երեկո: Ներսեանի խոսքով բացելով երեկոն, թանգարանի արևելագիտության բաժնի նախագահ Միհայիլ Կսպոկլուն Սայաթ-Նովային ներկայացրեց որպես մի բանաստեղծի, որն ամբողջ աշխարհին է պատկանում: Բանաստեղծուհի է. Փոփեսկու-Ժուտեցը հանդես եկավ «Հայ աշուղները» հաղորդումով, իսկ Հ. Ժ. Սիրունին զեկուցեց Սայաթ-Նովայի երգերի բանաստեղծական առանձնահատկությունների մասին: Երեկոյի վերջում արևելյան ժողովրդական գործիչների նվագակցությամբ երգչուհի Արաքս Սվաճյանը կատարեց անմահ երգչի ստեղծագործությունները: Հորելյանական օրերին հատուկ գրական հաղորդում տվեց Բուխարեստի ռադիոն: Բանաստեղծ էուլեն Ֆրունզը, Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործությունը ներկայացնելուց հետո, արտասանեց նրա գործերից մի քանիսը՝ իր թարգմանությամբ:

1963 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված երեկոներ ու հանդեսներ տեղի ունեցան աշխարհի գրեթե բոլոր հայաշատ վայրերում:

Վ. ՍՄԵԼՏՅԱՆ